Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
մայիսի 17-ի նիստի N 19
արձանագրային որոշման

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2011 թվականը կարելի է բնութագրել որպես մակրոտնտեսական կայունացման ամրապնդման տարի՝ երկու հիմնական տեսանկյուններով: Նախ՝ հետևողական դրամավարկային քաղաքականության, ինչպես նաև տարվա ընթացքում հավասարակշռված հարկաբյուջետային քաղաքականության միջոցով հաջողվեց մեղմել դեռևս նախորդ տարվա երկրորդ կեսից ձևավորված բարձր գնաճային միջավայրը, ինչին նպաստեցին նաև ներքին և արտաքին մակրոտնտեսական բարենպաստ զարգացումները: Երկրորդ՝ արձանագրվեց տնտեսական աճի տեմպերի արագացում, ընդ որում, հիմնականում արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի առաջանցիկ աճի հաշվին: Արտաքին մակրոտնտեսական կայունության առումով դրական էին նաև ընթացիկ հաշվի զարգացումները:

Ըստ էության, տարվա ընթացքում իրականացված դրամավարկային քաղաքականության ուղղությունները պայմանավորվել են ձևավորված և սպասվող մակրոտնտեսական միջավայրի պայմաններում բարձր գնաճի զսպման անհրաժեշտությամբ: Արդյունքում, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը տարեսկզբին խստացրել է դրամավարկային պայմանները՝ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 1,25 տոկոսային կետով:

Անդրադառնալով հաշվետվության առանձին բաժիններին՝ կարելի է նկատել, որ հաշվետվությունում ներկայացված գնահատականների համաձայն տնտեսության տարբեր հատ-

վածներից եկել են գնանկումային ազդակներ՝ ընդհանուր առմամբ 0.8-0.9 տոկոսային կետի չափով: Մասնավորապես, «3.4. Համախառն պահանջարկ և առաջարկ» բաժնի «3.4.1. Համախառն պահանջարկ» ենթաբաժնում ներկայացված է, որ 2011 թվականի 4-րդ եռամսյակում մասնավոր հատվածի կողմից իրականացվող ծախսումներն ունեցել են թույլ գնանկումային՝ 0.1-0.2 տոկոսային կետ ազդեցություն: Նույն ենթաբաժնում նշվում է նաև, որ հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը համախառն պահանջարկի վրա եղել է 0.9 տոկոսային կետով զսպող: «3.5. Աշխատանքի շուկա» բաժնում ներկայացվում է, որ աշխատանքի շուկայից նշված ժամանակահատվածում եկել են թույլ՝ 0.2 տոկոսային կետ գնաճային ճնշումներ:

Միաժամանակ, «3.3.1. Տոկոսադրույքներ» ենթաբաժնում ներկայացված ֆինանսական շուկայի տոկոսադրույքների միտումները փաստում են, որ նոյեմբերի երկրորդ կեսից միջբանկային շուկայում տոկոսադրույքների էական աճ է նկատվել, այն դեպքում, երբ սեպտեմբերին, գնաճի նվազման միտումների արագացման պայմաններում, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 8,5-ից 8 տոկոսի: Կարծում ենք, որ առավել մանրամասն պետք է վերլուծվեին նշված միտումները պայմանավորող գործոնները, այդ թվում՝ պարզաբանվեր դրանց կարճաժամկետ կամ երկարաժամկետ բնույթ ունենալու հանգամանքը, որից կախված առավել հասկանալի կլիներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրամի առաջարկի և տոկոսադրույքների կարգավորման իրականացված քաղաքականության բնույթը: